«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը և կիրառումը պատմություն առարկայի դասավանդման գործընթացում

Առարկան՝ Պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Եպրաքսյա Սաֆարյան

Ուսումնական հաստատություն՝ Արարատի մարզի Նոր Խարբերդի Մ.Ղազարյանի անվան №2 միջնակարգ դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ա) Ներածություն

բ) Մաս 1. Պրոբլեմային ուսուցման բնութագիրը

2. Պրոբլեմային ուսուցման առավելությունները

3. Պրոբլեմային ուսուցման կատեգորիաները

4. Պրոբլեմային ուսուցման դասի ընթացքը

5. Պրոբլեմային ուսուցման դասի օրինակ

գ) Եզրակացություն

դ) Օգտագործված գրականության ցանկ

Մարդու մտածողությունը կարելի է զարգացնել միայն ճանաչողական պրոբլեմների լուծման միջոցով: **/Ս.Լ. Ռուբինշտեյն/**

«Այսօր բավարար չէ երեխաներին բացատրել թե ինչ անեն: Օրակարգում այն հարցն է, թե ինչ են մտածում իրենց արածի մասին և ինչու՞ են դա անում»:

Ջերոմ Բրուներ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը.

Թեմայի արդիականությունը պայմանավորված է կրթական համակարգի բարեփոխումների արդի շրջափուլում կրթական չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքներով, համաձայն որոնց՝ ուսուցիչն ամեն կերպ պետք է խթանի սովորողի ինքնուրույն մտածելու, կշռադատելու, որպես նախաձեռնող հանդես գալու, ստեղծագործական մտածելու ունակությունները ամեն կերպ զարգացնելու, սովորողի ինքնուրույն գործելու ցանկացած դրսևորում:

Հետազոտության նպատակը.

Շեշտադրել աշակերտակենտրոն դասի կարևորությունը որպես կրթության որակի բարձրացման հիմնական նախապայման: Այդ գործընթացում կարևորել ուսուցիչ-աշակերտ համագործակցությունը, ինչպես նաև ուսուցչի ֆունկցիոնալ դերը սովորողի ինքնուրույնության, ստեղծարարության ու նախաձեռնողականության դրսևորումների որակի բարձրացման համատեքստում:

Հետազոտության խնդիրը.

Ցույց տալ ակտիվ ուսուցման արդյունավետությունը, կարևորել սովորողի անկախ, ինքնուրույն գործելու, ստեղծարար մոտեցում ցուցաբերելու կարևորությունը, ինչպես նաև ցույց տալ ուսուցչի կողմից ուսուցման մեթոդների ճիշտ ընտրության դերն ու նշանակությունը որպես կրթական համակարգի նոր չափորոշչի պահանջ, երբ դասավանդողն ու սովորողը հանդես են գալիս որպես համագործակցող սուբյեկտներ:

Մերօրյա տեղեկատվական դարաշրջանում սովորողները ամրապնդման ենթակա նյութի ծավալների աճին զուգահեռ հաճախ ոչ թե ամրապնդում, այլ պարզապես մտապահում են յուրացման համար նյութերը, այն էլ՝ շատ կարճ ժամանակով և միայն դասահարցմանը կամ քննությանը պատրաստ լինելու համար: Դպրոցական դասընթացում թեմային հատկացված ժամանակահատվածի սահմանափակությունը, աշակերտների թիվը հնարավորություն չեն տալիս ուսուցչին պարզելու՝ արդյո՞ք թեման յուրացվել է յուրաքանչյուր սովորողի կողմից, հարցման ենթարկված աշակերտը իրականում ամրապնդե՞լ է թեման, թե պարզապես կարողանում է վերարտադրել մտապահածը: Բացի այդ նույն թեման միևնույն ժամանակահատվածում և միևնույն մեթոդներով յուրաքանչյուր սովորողի կողմից չի կարող յուրացվել նույն աստիճանով, քանի որ տարբեր սովորողներ ունեն տարբեր ընդունակություններ:

Ուստի ուսուցիչը հաջորդ նյութին անցնելուց առաջ բավարարվում է սովորողների կողմից տվյալ թեմայի յուրացման աստիճանի գնահատմամբ: Նմանօրինակ խնդիրների լուծման արդյունավետ ուղիներ են առաջարկում ուսուցման նորարարական բազմաթիվ տեխնոլոգիաներ, որոնցից մեկն էլ պրոբլեմային ուսուցումն է: Ինչպես ուսուցման մյուս տեխնոլոգիաները՝ պրոբլեմային ուսուցումը ևս նպատակաուղղված է կրթության որակի բարձրացման խնդրի լուծումը:

Պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան մշակել է Ջ. Դյուին: Իր «Ինչպես ենք մենք մտածում» աշխատության մեջ հոգեբան ուսուցիչը մերժում է ավանդական դոգմատիկ ուսմունքը՝ դրան հակադրելով խնդիրների լուծման գործում սովորողների ակտիվ և անկախ պրակտիկ գործունեությունը:

«Մտածմունքն սկսվում է այնտեղ, որտեղ առկա է խնդրահարույց իրավիճակ և դա խնդիրների լուծումն է, ասում է Դյուին: Նրա այս բանաձևը XX դարում ձևավորվեց պրոբլեմային ուսուցման հիմքը[1]»:

Պրոբլեմային ուսուցման տեսության զարգացման մեջ էական դեր է խաղացել ամերիկացի հոգեբան Ջ.Բրունների հայեցակարգը, որը հիմնված է ուսուցման նյութի կառուցվածքի և նոր գիտելիքների յուրացման գործընթացում ինտուիտիվ մտածողության գերիշխող դերի վրա: «Ճանաչելով տրամաբանական մտածողության զարգացումը որպես ուսուցման նպատակ՝ Ջ.Դյուին, Ջ. Բրունները նշում են ուսուցման մեջ խնդրահարույց մոտեցման կարևորությունը[2]»: Է. Զավարյանն ընդգծել է տարբեր առարկաների ուսուցման ժամանակ խնդրահարույց իրավիճակների ստեղծման մեթոդների և խնդրի ճանաչողական առաջադրանքների բարդության գնահատման չափանիշների կարևորությունը[3]:

Մ. Դավթյանի և այլ հեղինակների «Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ» աշխատությունում պրոբլեմային ուսուցման մեթոդաբանությունը դիտարկվում է որպես ուսուցման արդիական մոտեցում: «Այսօր անհրաժեշտ է սովորողին ցույց տալ նյութի արդիականությունն ու կիրառելիությունը առօրյա կյանքում, որպեսզի նա հասկանա, թե ինչ իմաստ ու նշանակություն ունի նշված առարկայի շրջանակներում ստացած գիտելիքը հասարակական կյանքում[4]»:

Մաս 1. Պրոբլեմային ուսուցման բնութագիրը.

Պրոբլեմային է կոչվում այն ուսուցումը, որի ընթացքում աշակերտները ուսուցչի ղեկավարությամբ իրենց ունեցած գիտելիքների հիման վրա լուծում են պրոբլեմային խնդիրներ, հաղթահարում պրոբլեմային իրավիճակներ, որոնում գործողության նոր եղանակներ, կարգավորում ու կողմնորոշում իրենց գործունեությունը, գործադրում պրոբլեմային

շարադրանքի, մասնակի որոնողական կամ էվրիստիկական, հետազոտական մեթոդներ, ինքնուրույնաբար ձևակերպում իրենց մտահանգումներն ու եզրահանգումները, հասնում վերջնական նպատակի: Այսօրինակ գործունեության ընթացքում մշակվում և ամրապնդվում են սովորողների նոր գիտելիքները, կարողությունները և հմտությունները, զարգանում են ճանաչողական ակտիվությունը, հետաքրքրությունները, ստեղծագործական մտածողությունը և անձնային այլ որակներ:

Պրոբլեմային ուսուցման հիմնաքարը որոշակի իրավիճակի ստեղծումն է: Այստեղ շատ կարևոր է, որ լուծման համար ներկայացվող առաջադրանքը համապատասխանի սովորողների մտավոր կարողություններին, նրանց ունեցած գիտելիքներին:

Մաս 2. Պրոբլեմային ուսուցման առավելություններ

- զարգանում է սովորողների տրամաբանական մտածողությունը
- յուրացված գիտելիքը դարձնում է ապացուցելի
- ձեռք բերված գիտելիքը վեր է ածում համոզմունքի
- ձևավորում է սովորողների աշխարհայացքը
- սովորեցնում է մտածել գիտականորեն
- ուսուցումը դարձնում է հուզական
- զարգացնում է սովորողների ինտուիցիան
- նպաստում է ուսումնական նյութի խտացմանը
- հնարավորություն է ընձեռում օգտվելու միջառարկայական կապերից
- հնարավորություն է տալիս երկար ժամանակ մտապահել յուրացրած գիտելիքները
- զարգացնում է սովորողների երևակայությունը, կատարելագրոծում է կամքը, ձգտումը
- ինտենսիվացնում է ուսուցումը և արագացնում նրա տեմպը, ինչպես նաև մեծացնում է աշակերտների ինքնագործունեության շրջանակը, լայնացնում է նրանց որոնողական, հետազոտական աշխատանքներ կատարելու ոլորտը, ծանոթացնում գիտական մեթոդներին:

Մաս 3. Պրոբլեմային ուսուցման կատեգորիաները՝

- պրոբլեմը՝ տեսական կամ գործնական խնդիր է, որը պահանջում է լուծում, ուսումնասիրում, հետազոտում
- ուսումնական պրոբլեմը՝ - ճանաչողական, մտավոր խնդիր է, որն առաջադրվում է ուսումնական ծրագրերից, գիտության կողմից մշակված մարդկությանը հայտնի օրենքներից: Դա միայն աշակերտի համար է նորություն, այն իմաստով, որ նա իր համար «հայտնագործում» է վաղուց հայտնագործվածը:

- պրոբլեմային հարց՝ այն հարցն է, որն առաջացնում է ճանաչողական կամ մտավոր դժվարություն, որի պատասխանը չկա աշակերտների գիտելիքներում և ոչ էլ առկա տեղեկատվության մեջ.
- Պրոբլեմային իրավիճակ՝ այն վիճակն է, որը սուբյեկտի համար ստեղծում է դժվար կացություն, նրա կողմից փաստի, երևույթի, գործընթացի, խնդրի անհայտը որոնելու պահը, որը լի է մտքերի հակասություններով, բախումներով և կոնֆլիկտներով:
-

Մաս 4. Պրոբլեմային ուսուցման դասի ընթացքը.

Ուսուցիչը ուսումնական նյութից առանձնացնում է պրոբլեմը: Ինքը կամ աշակերտները ձևակերպում են պրոբլեմը: Առաջադրված պրոբլեմից բխող պրոբլեմային վիճակը ստեղծում է դժվար կացություն: Աշակերտների գիտելիքները չեն բավականացնում: Ստեղծվում է հակասություն՝ իմացածի ու անհայտի միջև, որն էլ դառնում է ուսուցման պրոցեսի շարժիչ ուժը: Աշակերտները սկսում են մտածել: Այդ պահից սկսած հուզական վիճակ են ապրում: Ձևավորվում է նրանց հետաքրքրությունը պրոբլեմի նկատմամբ: Նրանց մեջ աստիճանաբար ի հայտ է գալիս մտավոր ակտիվություն, ներքին դիրքորոշում ու ձգտում: Լինում են աշակերտներ, որոնք ունենալով բարձր ընդունակություններ, անմիջապես կազմում են մտավոր պլան ու անցնում գործողությունների: Սակայն սովորողների ճնշող մեծամասնությունը դժվարանում է լուծել պրոբլեմը, չգիտի ինչից սկսել: Ուսուցիչը նրանց առաջադրում է օգնող և ուղղորդող հարցեր, երբեմն էլ ուղղակի հուշում է: Սա հնարավորություն է տալիս սովորողներին գտնելու և լուծելու պրոբլեմի մի մասը: Սակայն առաջանում են ենթապրոբլեմներ, որոնց լրիվ լուծումից է կախված ստեղծված պրոբլեմային իրավիճակի հաղթահարումը: Ուստի աշակերտները վերանայում են իրենց մտավոր պլանը, գործողության եղանակներն ու պայմանները: Նրանք սկսում են կատարել մտավոր գործառնություններ: Նրանց ճանաչողական գործընթացը զարգանում է աստիճանաբար, փուլերով, որոնցում գործադրվում են էվրիստիկական, որոնողական, հետազոտական մեթոդներ: Պրոբլեմային իրավիճակները հաղթահարելիս սովորողները առաջ են քաշում վարկածներ, ստուգում դրանց ճշգրտությունը, հավաքում փաստեր, օգտվում տեղեկատվությունից: Այդ ընթացքում իմաստավորվում են ձեռք բերված գիտելիքները, որոնք վերածվում են համոզմունքների:

Աշակերտները օգտվում են նաև միջառարկայական կապերից, բացահայտում են առարկաների, երևույթների հարաբերությունները, պատճառահետևանքային կապերը և փոխկապակցությունները: Վերջում ստուգում են լուծված պրոբլեմի պատասխանը, հանգում որոշակի եզրակացությունների: Կատարվում է ամփոփում:

- Խնդրի ընտրությունը կատարելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի հետևյալ նկատառումները
- Արդյո՞ք այդ իրավիճակը հետաքրքիր կլինի աշակերտների տվյալ խմբի համար
- Այս խնդրի հետազոտումն իրագործելի՞ է և արդյոք հատկացված ժամանակն ու նյութատեխնիկական առկա պաշարներն արդյունավետ հետազոտություն վարելու հնարավորություն են ընձեռում:

Պրոբլեմային ուսուցման մեթոդով առաջնորդվող ուսուցիչները գործուն մասնակցություն են ունենում աշակերտների հետազոտության խնդիր ընտրելու հարցում, քանի որ սա աշակերտներին ավելի է ոգևորում:

Օրինակելի իրավիճակն առնվազն պետք է բավարարի հետևյալ հինգ չափանիշները.

- Պետք է իրական լինի: Սա նշանակում է, որ խնդիրը պետք է խարսխված լինի ոչ թե գիտության տվյալ ճյուղի սկզբունքներին, այլ աշակերտի իրական կենսափորձին:
- Խնդիրը պետք է որոշ չափով ոչ հստակ ձևակերպում ունենա, որպեսզի իր խորհրդավորությամբ ու խճճվածությամբ գրավի աշակերտին:
- Խնդիրը պետք է իմաստալից լինի և համապատասխանի աշակերտների մտավոր զարգացման մակարդակին:
- Խնդիրը պետք է բավարար չափով ընդգրկուն լինի, որպեսզի ուսուցիչը հնարավորություն ունենա իրագործել իր ուսուցողական նպատակը:
- Ցանկալի է, որ օրինակելի խնդրի լուծումը խմբային աշխատանք ներառի:

Մաս 5. Պրոբլեմային ուսուցման դասի օրինակ.

VIII դասարան Հայոց պատմություն

Դասի թեման – Երիտթուրքական հեղաշրջումը և արևմտահայությունը.

Դասի նպատակը – Պարզաբանել երիտթուրքերի հեղաշրջման, նրանց որդեգրած պանթուրքիզմի գաղափարախոսությունը, նրանց կողմից իրականացրած կիլիկիահայության կոտորածները և ինքնապաշտպանական կռիվների նշանակությունը.

Կրթական խնդիրներ՝

- Իմանան թեմայի հետ կապված տարեթվերը, իրադարձությունները, գործիչների անունները.
- Երիտթուրքական շարժման պատճառները և հետևանքները
- Երիտթուրքերի և սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի վարած քաղաքականության նմանությունները և տարբերությունները.
-

Դաստիարակչական.

- Ցույց տալ կիլիկիահայության ինքնապաշտպանական ուժերի և նրանց ղեկավարների խիզախությունը, հերոսությունը, անձնազոհությունը մեծաքանակ թուրքական ուժերի դեմ պայքարում.
- Սովորողների մեջ զարգացնել հայրենասիրություն, աներեր կամք, տոկունություն, համառություն:
-

Դասի տիպը – պրոբլեմային ուսուցման դաս.

Դասի ընթացքը – պրոբլեմային հարցի առաջադրում:

- Պրոբլեմային իրավիճակի ստեղծում
- Պրոբլեմի լուծում:
-

Շատ կարևոր փուլ է ուսումնական նյութից պրոբլեմի առանձնացումը և հարցի ձևակերպումը: Աշակերտներին առաջարկում եմ կարդալ դասագրքի հետևյալ հատվածները և գտնել հակասությունը (դասագիրք VIII դ. հայոց պատմություն Վ.Բարխուդարյանի խմբագրությամբ էջ 115):

1. «1908 թ. հուլիսին Թուրքիայում տեղի է ունենում պետական հեղաշրջում: Երկրում հաստատվում են սահմանադրական կարգեր, որտեղ վճռական դեր են խաղում երիտթուրքերը»:

2. «Սուլթան Աբդուլ Համիդ 2-րդը գաղտնի նախապատրաստություններ է տեսնում վերականգնելու սուլթանական բացարձակ միապետությունը»: Հակասությունը տեքստի երկու հատվածների միջև ակնհայտ է : Եթե տեքստի 1-ին հատվածից կարելի է եզրակացնել, որ

սուլթան Համիդ 2-րդը պետք է գահընկեց արված լիներ, ապա 2-րդ հատվածից երևում է, որ իրականում նա մնացել էր գահին և 1909թ. մարտի 31-ին հեղաշրջում կազմակերպել:

Եթե աշակերտները չեն տեսնում հակասություն, ապա ուղղորդում եմ նրանց և հուշում: Քանի որ տեքստում առկա է այլ հիմնախնդիր, ուստի ձևակերպում եմ մեկ այլ պրոբլեմ: Դասագրքի 116 էջում գրված է, «Ամրապնդելով իրենց իշխանությունը, երիտթուրքերը ծրագրում և իրագործում են Կիլիկիայի հայության կոտորածը»:

Սրանից առաջ, 115 էջում գրված է «1909թ. մարտի 31-ին Աբդուլ Համիդ 2-րդը հեղաշրջում կազմակերպեց: Սակայն կառավարությանը հավատարիմ զորքերը վերականգնում են երիտթուրքերի իշխանությունը: Սուլթանը գահընկեց արվեց»:

Ծանոթանալով տեքստի այս հատվածներին՝ աշակերտները ուսուցչի օգնությամբ նրանում խնդիր են տեսնում: Հակասությունը նրանում է, որ Կիլիկիայում հայերի կոտորածը սկսվել է 1909թ. ապրիլի 1-ին, այսինքն՝ այն օրը, երբ սուլթան Աբդուլ Համիդ 2-րդը վերականգնեց իր անսահմանափակ իշխանությունը:

Խնդիրը այն է, որ եթե ապրիլի 1-ին երիտթուրքերը կորցրեցին իրենց իշխանությունը, ինչպե՞ս կազմակերպեցին Կիլիկիայի հայության կոտորածը: Կամ՝ երբ երկրում սկսվում են ռազմական բախումները ինչպե՞ս կարող է ամրապնդված լինել երիտթուրքերի իշխանությունը:

Պրոբլեմային հարցի ձևակերպումը՝

Արդյո՞ք 1908թ. հուլիսը կարելի է համարել պետական հեղաշրջման ավարտ, այն դեպքում, երբ սուլթան Աբդուլ Համիդը գահընկեց է արվել 1909թ. ապրիլի վերջերին:

«Պրոբլեմային հարցը այն է, որն առաջացնում է իմացական դժվարություն: Եթե հարցի պատասխանը չի պարունակում նոր գիտելիքներ, կամ որոնելի անհայտ, ապա այդպիսի հարցը պրոբլեմային չէ[5]»:

Հարցի ձևակերպումից հետո աշակերտները սկսում են մտածել և աշխատել պրոբլեմի լուծման ուղղությամբ: Ստեղծվում է պրոբլեմային իրավիճակ: Պրոբլեմային ուսուցման էությունը պրոբլեմային իրավիճակի ստեղծումն է, որն արթնացնում ու ակտիվացնում է սովորողների մտածական գործունեությունը:

«Պրոբլեմային իրադրությունը պրոբլեմային ուսուցման հիմնական օղակն է, որի օգնությամբ արթնանում է միտքը, իմացական պահանջմունքը, ակտիվանում է մտածողությունը, ստեղծվում են պայմաններ ճիշտ ընդհանրացումների ձևավորման համար[7]»:

Աշակերտները նախ ի մի են բերում իրենց նախկին գիտելիքները պրոբլեմի մասին, ճշտում պակասող գիտելիքի հնարավոր սահմանները և սկսում որոնումները: Ճանաչողական գործընթացը զարգանում է աստիճանաբար, փուլերով, որոնցում գործադրվում են մասնավոր որոնողական, հետազոտական մեթոդներ: Այդ ընթացքում կուտակված գիտելիքները վերածվում են գործողությունների, գործի են դրվում միջառարկայական կապերը: Այս փուլում սովորողները հենվում են նախորդ փուլերում ձեռք բերված գիտելիքների վրա, որոնց միջև կապերի հետազոտման, բացահայտման ու ընդլայնման միջոցով ի հայտ են գալիս ենթապրոբլեմներ, դրանց լուծման նոր ուղիներ ու միջոցներ: Հետազոտական աշխատանքի ընթացքում սովորողներն առաջ են քաշում տարբեր վարկածներ, որոնում լրացուցիչ փաստարկներ ու հիմնավորումներ, ստուգում դրանց գիտականությունը, բացահայտում անհայտի հայտնաբերման ուղիները, կատարում ընտրություն:

Պրոբլեմի լուծման փուլում արդյունքը գլխավոր անհայտի հայտնագործումն է, որի միջոցով գտնում են մյուս անհայտները: Մեր թեմայում առաջադրված պրոբլեմը աշակերտները լուծեցին հետևյալ կերպ. երիտթուրքական հեղաշրջումը Թուրքիայում ընթացել է երկու փուլով: Այն սկսվել է 1908թ. հուլիսին և ավարտվել 1909թ. ապրիլին Աբդուլ Համիդի գահընկեցությամբ: Երիտթուրքերի հեղաշրջումը հուլիսյան դեպքերով չի ավարտվել, որովհետև հեղաշրջումից հետո որպես իրենց կուսակցության կենտրոն պահպանեցին Սալոնիկը: Եթե հեղաշրջումն ավարտված լիներ, նրանք իրենց նստավայրը կտեղափոխեին Կ.Պոլիս: Ըստ երևույթին նրանք վախենում էին Կ.Պոլսում գտնվող սուլթանին ու կառավարությանը հավատարիմ մնացած զորքից, քանի որ Համիդի բռնատիրական միապետությունը չէր վերացվել, նա մնացել էր իշխանության գլուխ: Երիտթուրքական հեղաշրջումը կատարվել էր հիմնականում թուրքական բանակի սպաների ուժերով, իսկ քաղաքացիական բնակչության շրջանում շատ քիչ թվով կողմնակիցներ ունեին և չէին կարող ամրապնդել իրենց դիրքերը կառավարման ղեկի մոտ, դրա համար էլ կառավարություն չկազմեցին և բավարարվեցին սուլթանի լիազորությունները սահմանափակելով: Նրանք վախենում էին նաև հեղաշրջումը ողջունած հպատակ ժողովուրդների ազատագրական պայքարից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Պատմություն առարկայի դասավանդման ընթացքում ուսումնական նյութի մատուցումը պրոբլեմային ուսուցման մեթոդի կիրառման միջոցով կարևոր և առաջնահերթ խնդիր է, քանի որ այդ մեթոդով նյութի մատուցումը նպաստում է ոչ միայն աշակերտների ճանաչողական հետաքրքրության զարգացմանը, այլև մտածողության զարգացմանը, օգնում է որոշակի տրամաբանական կապ հաստատելու նախկինում անցած թեմաների և նոր դասավանդվող ուսումնական նյութի միջև: Պրոբլեմային ուսուցումը շատ արդյունավետ միջոց է սովորողների ճանաչողական ակտիվության խթանման, տրամաբանական մտածողության, կարողությունների և հմտությունների զարգացման տեսակետից:

Այս ճանապարհով աշակերտների ձեռք բերած գիտելիքները խորն են, գիտակցված ու տևական, իսկ առաջացրած հետաքրքրասիրությունը շարժառիթ է հետագա ճանաչողական գործունեության ակտիվացման համար:

Պրոբլեմային ուսուցումը զարգացնում է նաև ստեղծագործական մտածողությունը, քանի որ դա կարող է ձևավորել միայն դժվարություններ, խոչընդոտներ հաղթահարելու ճանապարհով: Փորձը ցույց է տալիս, որ եթե աշակերտն ինքն է հասնում իրեն առաջադրված պրոբլեմի լուծմանը, ապա ձեռք բերած գիտելիքը նա կարողանում է ավելի երկարատև հիշել: Դրա պատճառն այն է, որ աշակերտը համակարգում է իր ունեցած գիտելիքները, դրանց միջից հանում է այն հիմնականն ու կարևորը, որը տվյալ պահին իր համար առաջնայինն է և տանում է դեպի պրոբլեմի լուծման:

Պրոբլեմային ուսուցումը իրենից ներկայացնում է շատ էֆեկտիվ միջոց, որը բարձրացնում է աշակերտի ուսումնասիրման ակտիվությունը. «Պրոբլեմատիկ մոտեցումը ուսման մեջ ներկայացվում է որպես աշակերտների ակտիվության հիմնական միջոց[6]»:

Պրոբլեմային ուսուցումը պարտադիր որակ է ժամանակակից դասավանդման մեջ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Дьюи Дж., Психология и педагогика мышления Под ред. Н. Д. Виноградова, Москва «Мир», 1915г. ст. 68

2. Матюшкин А.М. – Проблемные ситуации в мышлении и обучении, Москва, «Педагогика, 1972г.» ст. 35

3. Է. Զավարյան, Կենսաբանության դպրոցական դասընթացում պրոբլեմային ուսուցման կիրառման օրինակներ. «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, Երևան, 2008թ. թիվ 3/4, էջ 44-45

4. Մ.Դավթյան և ուրիշներ, Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ, Երևան, 2004թ. էջ 7

5. Հովհաննիսյան Գ. Զոհրաբյան Ա. «Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, ԱՅՐԵՔՍ, Երևան, 2004թ. էջ 120

6. Ամիրջանյան Յու.Ա. «Մանկավարժություն», 2005թ. էջ 142

7. Ի.Ա.Իլնիցկայա «Պրոբլեմային իրադրությունները և նրանց ստեղծման ուղիները դասի ժամանակ»: Երևան «Լույս» 1989թ. էջ 17

8. Հայոց պատմության VIII դասարանի դասագիրք Վ.Բարխուդարյանի խմբագրությամբ

9. Համացանց

10. Հերթական ատեստավորման ենթակա պատմության ուսուցիչների մասնագիտական զարգացման, վերապատրաստման դասընթացների ուղեցույց. 2011թ.